*857. ԽԱՉԲԱՐ, գեղաքանդակ, գտնվելիս է եղել եկեղեցու հարավում, այժմ չկա.*

Ես Միրզայ Մկրտիչ կանգնեցի զխաչս հաւրն մեր Աթանասին
թվին ։ՋՂԳ։ (1544)։

*Հրատ. Սմբատյանց, 508։ Լալայան, XVIII, 139։*

Ս. ՍԱՐԳՍԻ ՇՐՋԱՊԱՏԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

*858. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև, հարավային երեսին կենցաղային անասարան, շրջանակին 1 տող.*

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐԻՆ ՈՐ Է ՈՐԴԻՆ ՆԵՐՍԷՍԻՆ ԹՈՒԼ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻՆ ՆԵՐՍԷՍԻՆ. ԹՎ. ։ՌԼ։ (1581)։

*859. ՏԱՊԱՆԱՔԱՐ, նախորդի նման և նրան մոտ հյուսիսից, հարավային երեսին խորաններ և սրանց գլխին 1 տող.*

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳԱՍԲԱՐԻՆ ԹՈՒԼ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳԱՍԲԱՐԻՆ. ԹՎ. ։ՌԼ։ (1581)։

## ՄԱՐՏՈՒՆԻ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ՂԱՐԱՆԼՈՒԽ. ՀՆՈՒՄ՝ ՆԵՐՔԻՆ ԿԶՆՈՒՏ)

*Գյուղի հնագույն անունն անհայտ է, աղբյուրներում, XVII դարից սկսած՝ նաև «Ջամբռի» մեջ հիշատակվում է Ներքին Կզնուտ անունով։ Գյուղամիջում այժմ արձանագրություններ ունեցող հուշարձանները գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցին և նրա շուրջը տարածված գերեզմանատունն են։ Եկեղեցին գտնվում է գյուղի հարավային եզրին և շինված է ճեղքված քարերով. մեծ նորոգման է ենթարկվել Ալաշկերտի գաղթականների կողմից։ Սրա պատերի մեջ ագուցված են ավելի հին խաչքարեր և տապանաքարեր՝ ամենահինը՝ 1531 թ.։ Շրջապատի գերեզմանատան մեջ կան 4—5 խաչքարեր և բազմաթիվ տապանաքարեր, որոնցից հինն ունի 1551 թ.։ Այստեղ կարևոր են հատկապես եկեղեցու հարավում գտնվող տանուտերի հուշարձանները։*

*Սմբատյանցն ու Լալայանը հիշատակում են գյուղի հարավում մի ավերակ եկեղեցի ևս, որի մոտ եղել է խաչքար՝ Շմավոն եպիսկոպոսի անունը հիշող արձանագրությամբ, բայց մենք չկարողացանք գտնել այն։*

*Գյուղի մեջ, նրա արևմտյան մասում, կա մի ձիթհանք ավերակ, որի պատի մեջ և ներսում ընկած են երկու մնացած տապանաքարեր՝ ձևով հայկական, բայց արաբատառ արձանագրություններով։*

*Ավելի հին և մեծ թվով արձանագրություններ կան գյուղից 7—8 կիլոմետր հարավ, Սևլիմի լեռնանցքի բարձունքների տակ եղած ձորամիջի ավերակներում, որոնք ընդհանուր անունով կոչվում են* Մարտունու գոմեր: *Դա մի նեղ և երկար ձոր է, որն սկսվում է վերին Ղարանլուխից քիչ վերև և թեքվում դեպի արևելք։ Ձորամիջում սկիզբ է առնում և հոսում Կզնուտ գետակը, այժմ այդ ձորը միայն արոտավայր և անասնագոմերի վայր է, բայց հնում այստեղ եղել են երեք գյուղեր, ավելի ճիշտ ագարակներ, որոնց ավերակները իրարից մոտ մեկ կիլոմետր հեռավորությամբ, տեղավորված են գետակի աջ ափին։ Ներքևից բարձրանալով՝ դրանցից առաջինի մեջ մնում են փոքր եկեղեցու և անների ավերակները միայն։*

Երկրորդի մեջ դեռ ավերակ եկեղեցու հիմնապատերը և շուրջը՝ գերեզմանատուն։ Եկեղեցին շինված է ճեղքված քարերով. թաղածածկ է եղել. ներսում և շուրջը կան խաչքարեր և գերեզմանաքարեր. Հնագույն թվականն այստեղ 1244 է՝ մի խաչքարի վրա։ Երրորդ ավերակավայրն հեռու է երկրորդից մեկ կիլոմետր։ Այստեղ ևս մնում են նախորդին նմանող եկեղեցու հիմնապատերը և շուրջը գերեզմանատուն, հնագույն թվականը 1554 է։

Նկարագրված այս հնավայրերը խիստ ավերված են, բոլոր հուշարձանները համարյա այդին ենթակա են եղել և ենթակա են անհետացման։ Ե. Լալայանն առանց ստույգ տեղը հիշատակելու այս ձորից ունի մի արձանագրություն խաչքարի վրա, վրաց թագավոր Լաշայի, Շահնշահի և Ավագի անվան հիշատակումով, որի թվականը սխալ է արտագրել ՌԿԹ (1620)։ Բաղդատելով Լալայանից՝ մենք ուղղել ենք թվականը և այլ բացարձակ անճշտությունները։ Այս խաչքարը մենք չգտանք տեղի ավերակներից և ոչ մեկի մեջ։

Այս վայրերից մեր ժողովածուում ամփոփված են 38 արձանագրություն, որոնցից միայն մեկն է հրատարակված։

## ՄԱՐՏՈՒՆԻ

**860. ԽԱՉՔԱՐ**, մեծ և գեղաքանդակ, ագուցված է գյուղամիջի ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատի մեջ. ունի լայն ճակատ՝ զարդարված չորս խորաններով, որոնց շրջանակներին, ապա նաև բուն խաչի շուրջը և քիվին ուռուցիկ տառերով.




ԵՍ ԱԹԱՆԷՍ ԿԱՆԿ(Ն)ԵՑԻ ԶԽԱԶՍ ՑԻՇԱՏԱԿ ԻՆՁ (ԵՒ) ՅԱԶԳԻՆ ԻՄ .....
ՄԻՐԱՆՇԻՆ, ՀԵՐԱՊԵՏԻՆ, ԽՈՅԱՅԴՂԻՆ, ՆԵՐՍԷՍԻ(Ն), ՈՍԿԱՆԻՆ, ՎԱՐԴԱՆԻՆ,
ԲԱԲԻՆ, ԳՐԻԳՈՐԻՆ, ՍԱՎԴԼՈՒ ՇԱՀԻՆ, ԿԱԶՄՈՂՍ ՄԱԹԷՈՍ ԷՐԷ(Ց)Ս.
ԹՎ. ։ՋՁ։ (1531)։

861. *ԽԱՉՔԱՐ, փոքր, կանգնած է եկեղեցու հարավ-արևելքում. քիվին և խորանից վերև 4 տող.*

ԵՍՈՍԿԱՆՍԿԵՑԻԽԱՉ
ԻՇԱՑՏԱԿՏՈՒՆԻՆԻՐ
ԾՆՈՂԱՑԵՒԻՐՈՐԴՒՈՑԱՄ
ԹՎ Ռ

ԵՍ ՈՍԿԱՆՍ [ԿԱ՛Ն]Կ[՛Ն]ԵՑԻ ԽԱՉՍ| ԻՇԱՑՏԱԿ ՏՈՒՆԻՆ, ԻՐ| ԾՆՈՂԱՑ ԵՒ ԻՐ ՈՐԴՒՈՑ, ԱՄ՛Ն. ԹՎ. :Ռ: (1551):

862. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, սեղանակերպ, բարձր, երկու կողքերին խորաններ ու խաչեր, գտնվում է եկեղեցու հարավում. արձանագիրն սկսվում է հարավից և շարունակվում հյուսիսում՝ 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱԿՈԲՃԱՆԻՆՈՐԷՈՐԴԻ
ՏԱՆՈՅՏԷՐՍԱՐԳԻՍԻՆ ԹՎ ՌՂԴ:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱԿՈԲՃԱՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ| ՏԱՆՈՅՏԷՐ ՍԱՐԳԻՍԻՆ, ԹՎ. :ՌՂԴ: (1645):

*Հրատ. Սմբատյանց, 541։*

863. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, վրան 2 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՊԱՐՈՆԲԱՃԻՆՈՐԷ
ՄԱՅՐՏԱՆՈՅՏՐՍԱՐԳՍԻՆԹՎ ՌՂԴ:

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ԲԱՃԻՆ, ՈՐ Է| ՄԱՅՐ ՏԱՆՈՅՏ[Է]Ր ՍԱՐԳՍԻՆ. ԹՎ. :ՌՂԴ: (1645):

864. *ՏԱՊԱՆԱՔԱՐ. տափակ, եռաստիճան, նախորդների մոտ. երեսին 3 տող.*

ԱՅՍԷՀԱԳԻՍՏՊԱԻՆՈՐ
ԷՀԱՅՐՏԱՆՈՅՏՐՍԱՐԳԻՍԻՆ
ԹՎ ՌՂԹ:

ԱՅՍ Է ՀԱ[Ն]ԳԻՍՏ ՊԱԻՆ, ՈՐ| Է ՀԱՅՐ ՏԱՆՈՅՏ[Է]Ր ՍԱՐԳԻՍԻՆ.| ԹՎ. :ՌՂԹ: (1650):

865. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 7 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏՋԻՆԻԽԱՆ
ԻՆՈՐԷԿՈՂԱ
ԿԻՑՏԱՆՈՒ
ՏԷՐՍՍՐԳԷ
ԻՆ: ԹՌՃ
Է

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ՋԻՆԻԽԱՆ|ԻՆ, ՈՐ Է ԿՈՂԱ|ԿԻՑ ՏԱՆՈՒ|ՏԷՐ ՍՍՐԳԷ[Ս]ԻՆ: ԹՎ. :ՌՃԷ: (1658):

866. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդների մոտ. երեսին 6 տող.




ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ԴԱՆՈ|ԻՏ[Է]Ր ԱԿՈԲԻՆ|, ՈՐԴԻ ԴԱՆՈՒ|Տ[Է]Ր Դ[Ա]ՒԹԻՆ. ԹՎ. ։ՌՃԻԱ։ (1672)։

867. ՏԱՊԱՆԱՔԱՐ, մեծ, օրորոցաձև հարավային երեսին հեծյալ, ձիու սանձից բռնած մարդ, երկու պարողներ և հացի սեղան, նախորդին մոտ. երեսին 4 տող.




ԵՍ ՏԱՆՈՒՏ[Է]Ր ԴԱՒԻԹՍ| ԿԱՆ[Գ]ՆԵՑԻ ՍԲ. ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՈՐԴՈՑ| ԻՄ ՊԱՐՈՆ ՍԱՂԻՆ[Ի]. ԹՎ. ։ՌՃԽ։ (1691)։

Հրատ. Սմբատյանց, 541։

868. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի հարավում, երեսին 7 տող.




ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՃԱՆ|ՍՕԼԹ[Ա]ՆԻՆ|, ԿՈՂԱԿԻՑ| ՏԱՆՈՒՏ[Է]Ր| ԴԱՒԹԻՆ|, ԹՎ. ։ՌՃԼԸ։ (1689)։

869. ԽԱՉՔԱՐ, մեծ և գեղաքանդակ, կանգնած է եկեղեցու հարավային պատի մոտ, քիվին, ճակատի շրջանակներին և խորանի վերին եզրերին 5 տող.




ՍԲ. ԽԱՉՍ| ԲԱՐԵԽ[Ա]Ւ[Ս] ԱԶԻԶՊԷԿԻՆ ԵՒ ԿՈՂԱԿԻՑ| ՄԱՐԳԱՆԻՆ. |ԹՎ. ։ՌՃԲ։ (1653)։

Հրատ. Սմբատյանց, 541 (աղավաղված և տեղը չփոխված)։

870. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երկաստիճան, նախորդ խաչքարի դիմաց, երեսին 3 տող.*

ԱՅՍԷ ՀԱՆԳ
ԻՍՏ ԱՁԻՁԳԿ
ԻՆ: ԹՎ: ՌՃ:

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԱՁԻԶԳ[Է]Կ|ԻՆ. ԹՎ. :ՌՃ: (1651):

Ծանոթ. *Խաչքարի և տապանաքարի վրայի թվականների տարբերությունը հասկանալի է. տապանաքարինը Ազիզբեկի մահվան թիվն է, իսկ խաչքարինը՝ նրա կանգնեցման։*

Լուսանկ. 173

871. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 6 տող.*

ԱՅՍԷ
ՀԱԳԻՍ
ՏԳԻՐ
ԱԿՈՍ
ԻՆԹՎ
ՌՃ

ԱՅՍ Է| ՀԱՆԳԻՍՏ ԳԻՐ|ԱԿՈՍ|ԻՆ· ԹՎ.| :ՌՃ: (1651):

872. *ԽԱՉՔԱՐ, մեծ և ղեղաքանդակ, ղանվում է եկեղեցու հարավում. քիվին, ճակատի շրջանակներին և թևերի տակ 5 տող.*




ՍԲ. ԽԱՉՍ ԲՍՐԼ|ԽԱԽՍ ԽԱՉԱՏՈՒՐ ՔԱՀԱՆԱՑԻՆ ԿՈՂԱԿՑԻՆ| ԳՈՒԼԻՆԻՆ|. ԹՎ. :ՌՃԱ: (1652):

*Հրատ. Սմբատյանց, 541.*

873. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երեսին գավազան, նախորդ խաչքարի դիմացը, վրան 3 տող.*

ԱՅՍԷՀ ԱՆԳԻՍ
ՏԽՍՉԱ ՏՈՒՐ
ՔՀԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ|Տ ԽԱՉԱՏՈՒՐ| ՔԱՀԱՆԱՑԻՆ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին։*

874. *ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, երկաստիճան, եկեղեցու հարավ-արևմտյան անկյունի մոտ, երեսին 7 տող.*

ԱՅՍԷՀԱ
ՆԳԻՍՏ
ՍԻՐԻՊՈ
ՆԻՈՐԴԻ
ԳԻՐԻՔՈ
ՐԻՆԹՎԱ
ՃԽԲ

ԱՅՍ Է ՀԱ|ՆԳԻՍՏ| ՍԻՐԻՊԱ|ՆԻ ՈՐԴԻ| ԳԻՐԻՔՈ|ՐԻՆ. ԹՎ. :ՌՃԽԲ: (1693):



14—619

*875.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *տափակ, երկաստիճան, նախորդի մոտ. իրեսին 5 տող.*

ԱՅՍԷՀԱԳ
ԻՍՐԳԵՐԵԱ
ՆԱՅԻՆԴՈՒ
ՍՐՍՐԱՊՈՆԻ
ՆԹՌՃԻԵ

ԱՅՍ Է ՀԱՆԳ|ԻՍՏ ԳԵՐԵԱ|ՆԱՅԻՆ, ԴՈՒ|ՍՏՐ ՍՐԲԱՊՈՆԻ|Ն. ԹՎ. :ՌՃԽԵ: (1696):

*876.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐԻ*** *վրա.*

Մր. խաչս բարէխաւս Զաքարին և կենակցին թվ. :ՌՃԻԳ: (1674):

*Հրատ. Սմբատյանց, 537, Լալայան, XVIII, 152,*

*877.* ***ԽԱՉՔԱՐ,*** *կանգնած է եղել գյուղի հարավային կողմի կիսավեր եկեղեցու հյուսիսային մուտքի մոտ. վրան՝*

Ի արհիեպիսկոպոսութեան տն, Շմաւոնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, Եւ Գրիգորս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ եղբաւրն իմոյ Սամանգիւլին:

Ծանոթ. Շմաւոն *եպիսկոպոսը հիշատակված է մի շարք արձանագրությունների մեջ, XVI դարի առաջին կեսում։*

*Այս արձանագրությունը Սմբատյանցը գրել է Ներքին, իսկ Լալայանը սխալմամբ կրկնել թե՛ Ներքին և թե՛ Վերին Ղարանլուխների նկարագրության մեջ։ Մենք չկարողացանք այն հայտնաբերել երկու գյուղերից ոչ մեկում և պայմանականորեն դնում ենք այստեղ։ Սմբատյանցն ընդհանրապես այդ երկու գյուղերի արձանագրությունների տեղագրությունը շփոթել է։*

*Հրատ. Սմբատյանց, 537, Լալայան, XVIII 148 և 152,*

### ՄԱՐՏՈՒՆՈՒ ԳՈՄԵՐ

*878.* ***ԽԱՉՔԱՐ,*** *կանգնած է Բ եկեղեցու բեմի վրա, պատվանդանով, որի արևմտյան ճակատին կա քառակուսի փոս և տակին 2—3 բառ՝ անվերծանելի. խաչքարի հարավային կողին, կարճ, 13 տող.*



ԹՎ. :ՈՀԳ: (1224) ՔՍ. ՑԻՇԵԱՑ ՉՀԱՄՉԷ Ի ՔՈՒՄ ԳԱԼՐՍՏԵՍՆԴ. ԱՄԷՆ:

Լուսանկ. 174

*879.* ***ԽԱՉՔԱՐ,*** *ընկած և կոտրված երկու մասի. նախորդի մոտ. Ներքևի գունդի շուրջը միայն թվականը.*




ԹՎ. :ՋԿԲ: (1513):

**880. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *նույն եկեղեցու պատի տակ, ագուցված է երկաստիճան պատվանդանի մեջ, հարավային երեսին թամքած ձի, կանգնած վիճակում նն-ջեցյալ, մարդագլուխ վազր, նվագող, գավ և հացեր. արևելյան և արևմտյան ճակատներին 8 տող.*

ԽՉԱԲԷԽՍՄԻՔԱՅԷԼԻՆ
ԹՎ.Ջ.Դ

ԱՅՍԷՀԱՆ
ԳԻՍՏՄԻՔԱՅ
ԷԼԻՆ:ՈՐԷՐՈՐ
ԴԻԴԱՒԹԻՆ
ԽՈՆԹ ԽԱԹ
ՈՒՆ ○ ԻՆ

ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՒՍ ՄԻՔԱՅԷԼԻՆ.| ԹՎ. ՋԴ: (1541): ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ ՄԻՔԱՅ|ԷԼԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐ|ԴԻ ԴԱՒԹԻՆ|, ԽՈՆԹԽԱԹ|ՈՒՆԻՆ:

**881. ԽԱՉՔԱՐ**, *ընկած նախորդի մոտ, քիվին 1 տող.*

ԴԱՒԻԹԽՈՆԴԽԱԴՈՒՆ

ԴԱՒԻԹ, ԽՈՆԴԽԱԴՈՒՆ:

Ծանոթ. *Ժամանակակից է նախորդին,* XVI *դար։*

**882. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *նախորդների մոտ, հարավային կողին նվագող, թամքած ձի, գավ ու պնակներ, շրջանակին և արևմտյան ճակատին 2 տող.*

|Գ ԱՅՍԷՏԱՊԱՆՍԻԱՅՄՈՆԻՆՈՐԴԻՇԻԽԻՆ
ԹՎՋԴԹ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԻԱՅՄՈՆԻՆ, ՈՐԴԻ ՇԻԽԻՆ. |ԹՎ. ՋԴԹ: (1550):

**883. ԽԱՉՔԱՐ**, *ընկած է եկեղեցու պատի տակ, քիվին մնացորդ 1 տող.*

ԵՍՀՐԱՊԵՏՍԿԱԶՄԵՑԻԽԱՉՍՀԱՅՐԻՄՈՅՄԷԼՔՍԷԹ···

ԵՍ ՀՐԱՊԵՏՍ ԿԱԶՄԵՑԻ ԽԱՉՍ ՀԱՅՐ ԻՄՈՅ ՄԷԼՔՍԷԹԻՆ...

Ծանոթ. *Ըստ քանդակների ոճի* XVI *դար։*

**884. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *եկեղեցու արևելյան կողմում, արևելյան ճակատին 6 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳ··
ՄԿԻՐԱԿՈ
ՍԻՆՈՐԴԻ
ԱԼԷՔՍԱՆՏ
ՐԻՆ: ԹՎ ՌԺԸ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԿԻՐԱԿՈՍԻՆ, ՈՐԴԻ ԱԼԵՔՍԱՆՏՐԻՆ. ԹՎ. ՌԺԸ: (1569):

**885. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *օրորոցաձև, փոքր. ագուցված պատվանդանի մեջ. հյուսիսային կողին 5 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏՄՆ
ԱՑԱԿԱՆԻՆՈՐԴԻ
ԷԴԿԱՐԻՆՇԱՀՈՒՄ
ԻՆ
ԹՎՌՃԾ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄՆ|ԱՑԱԿԱՆԻՆ, ՈՐԴԻ| ԷԴԿԱՐԻՆ, ՇԱՀՈՒՄ|ԻՆ. |ԹՎ. ՌՃԾ: (1701):

**886. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, նեղ և երկատալեճան, տեղից շարժված նախորդների մոտ, երեսին 6 տող.*

ԱՅՍԷ~Ն՛
ԳԻՄՍԱԹ
ՆԻՆԿՈՂ
ԻՑԻՊԱՏՈՒ
ՄԻՆ ԹՎ՜
ԾԲ

ԱՅՍ Է ՙՀԱՆ|ԳԻՍՏ ՍԱԹ՛ՈՒ՛|ՆԻՆ, ԿՈՂԱԿ|ԻՑԻ ՊԱՏՈՒ|ՄԻՆ. ԹՎ. ՌՃԾԲ։ (1703)։

Լուսանկ. 175

**887. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *տափակ, երեսին 1 տող.*

ԱՅՍԷՀԱՆԿԻՍՏԵՂԻՍԱԻՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԵՂԻՍԱԻՆ։

**888. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, հարավային կողին թամքած ձի՝ վրան որսի բազե, նվագող, շրջանակից մնացորդ 2 տող.*

ԱՅՍ ՏԱՊԱՆԱՆ
ԴՐԻԱՍ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՆ|ԴՐԻԱՍԻ։

**889. ՏԱՊԱՆԱՔԱՐ,** *օրորոցաձև, տեղահան եղած և ջարդոտված, գտնվում է եկեղեցու հանդեպ, գետակի ձախ ափի փոքր գերեզմանատան մեջ մի քանի անտապանագիր գերեզմանաքարերի մեջ. ճակատին մնում է թվականը որոշ.*

ՏԷՐ
...ՄԷ
ԹՎՌԴ ...ՄԻՏ

ՏԷՐ... ԹՎ. ՌԴ։ (1555)։

Գ. ԵԿԵՂԵՑՈՒ ՇՈՒՐՋԸ

**890. ԽԱՉՔԱՐ,** *մեծ և գեղաքանդակ, ընկած է եկեղեցու հարավ-արևմտյան անկյունի մոտ, արտաքուստ, քիվին 1 տող.*

ԵՍՄԿՐՉՍԿՆԿՑԻԽՉՍՄՆՈՒԿԱՂՆԹՌ|Գ

ԵՍ ՄԿՐՏԻՉՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՄԱՆՈՒԿ ԱՂԱԻՆ. ԹՎ. ՌԳ։ (1554)։

Ծանոթ. *Թվականի միավորը գրված է հարավային կողին։*
*Զ-Ջ տարածված է Գեղարքունիքում, թողնում ենք նույնությամբ։*

Լուսանկ. 176

**891. ԽԱՉՔԱՐ,** *նախորդի ոճի և նրան մոտ, պատվանդանի վրա, քիվին 1 տող.*

ԷՍՄԷԼԻՔԿՅԽՍՄԿՏՐՉՂՌ|Դ

ԵՍ ՄԷԼԻՔ ԿԱՆԿՆԵՑԻ ԽԱՉՍ ՄԿՐՏԻՉ ԱՂԻՆ. ԹՎ. ՌԴ։ (1555)։

Ծանոթ. *Տասնավորը՝ հարավային կողին։*

**892.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, սեղանակերպ, գտնվում է եկեղեցու արևմուտքում, հարավային երեսին կենցաղային տեսարան, շրջանակին եղծված 1 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՎԱՆԵՍԻՆ.
ԹՎ. ։ՌԺ։ (1561)։

**893.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, օրորոցաձև, նախորդի մոտ, վրան 3 տող.*



ՍՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԳՐԻԳՈՐԻՆ, ՈՐԴԻ ԵՂԻՑԻՆ. ԹՎ. ։ՌՃԽ։ (1691)
ՄԵԾ ՈՐԴԻՆ ԱԿՈԲԻՆ։

Ծանոթ. ԱԿՈԲԸ *գերեզմանաքար շինել տվողն է։*

**894.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, օրորոցաձև, նախորդի մոտ. շրջանակներին 3 տող.*



ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ ՂԱՐԱՑԽԱՆԻՍ, ՈՐԴԻ ԵՂԻԿԻՆ. ԹՎ. ։ՌՃԽԷ։ (1698)։

**895.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, մեծ, գտնվում է եկեղեցու արևելյան կողմում. հարավային երեսին 3 տող.*



ԿԱՄԱՎՆ ԱՅ. ԵՍ ԱԻԵՏԻՍ, ՈՐԴԻ ՆԻԱԶԻՆ, ԿԱՆԿՆԵՑԻ ՀՈԳՈՑ ԻՄՈՑ. ԹՎ. ։ՌՃԾԳ։ (1704)։

Լուսանկ. 177

**896.** ***ՏԱՊԱՆԱՔԱՐ**, տափակ, նախորդի մոտ, երեսին 5 տող.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԽԱՆՈՒՄԻՆ, ԿՈՂԱԿԻՑ ՆԻԱԶԻՆ. ԹՎ. ։ՌՃԾԵ։ (1706)։

**897.** ***ԽԱՉՔԱՐԻ** վրա, որն այժմ չկա.*

ԹՎ. ։ՈԿԹ։ (1220). Եւ ի թագաւորութիւնն Լաշին, և ի պատրոնութիւնն մեծի... և զարգանալն Շահնշահի և Աւագին և ի յիշխանութիւնն Վասակայ և որդոյ իւրոյ բաքաւին. Ես Գազան Լաւռեցի կանգնեցի զխաչս

վասն հոգո իմո փրկութեան և ամուսնոյ իմոյ. ով կարդայք յիշեցէք ի Քս. Տr. Ած. ողորմի յիւրում գալստեանն ամէն: Եւ զԱբրահամ կրաւ-
նաւորս՝ զկազմողս յիշեցէք ի Քս. Տr. ԱԾ. ողորմի. ամէն:

Ծանոթ. *Ունի՝ միայն Լալայանը, XVIII, 152, ուղղել ենք՝ :ՌԿԹ: (1620)=:ՈԿԹ: (1220):*
Գաչան=Գավան:

*Տե՛ս նաև Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 79։*

## ՎԵՐԻՆ ԴԱՐԱՆԼՈՒ (ՀՆՈՒՄ՝ ՎԵՐԻՆ ԿԶՆՈՒՏ)

*Այս գյուղի հնագույն անունը նույնպես անհայտ է՝ XVII դարից հայտնի էր վերին Կըզ-նուտ անունով։*

*Գյուղի արձանագրություններ ունեցող ամենամեծ հուշարձանը գերեզմանատունն է, որը գտնվում է գյուղի կենտրոնում, ս. Գևորգ եկեղեցու շուրջը։ Հնում այն շրջապարիսպ է ունե-ցել, որի մնացորդները կան այժմ։ Գերեզմանատունն ընդարձակ է, այնտեղ կան բազմա-թիվ խաչքարեր և տապանաքարեր. մեծ մասը լավագույն վարպետների գործեր են։ Տապա-նաքարերը խիստ բազմաձև են, XV—XVII դարերի սովորական բոլոր նմուշներն այստեղ խմբված են կողք-կողքի. Նշանակալից է և այն, որ նրանց մեծ մասի վրա քանդակներից բացի կան կենցաղային տեսարաններ՝ վարպետորեն կատարված։ Ամենահին թվականն այս գերեզմանատանը 1451-ն է։*

*Գերեզմանատան մեջ է գյուղական ս. Գևորգ եկեղեցին՝ շինված ճեղքված քարերով, որը մեծ նորոգումների է ենթարկվել Ալաշկերտի գաղթականների կողմից։ Պատերի մեջ որպես շինանյութ օգտագործվել են խաչքարեր և տապանաքարեր։*

*Գյուղամիջում կան մեկ ավեր և մեկ շեն ձիթհաններ, որոնցից առաջինի պատին ագուց-ված խաչքարի վրա կա շինարարական արձանագրություն (№ 644)՝ 1651 թվական։*

*Գյուղից արևմուտք, գետակի ձախ ափին, բարձր բլուրի գագաթին մնում են բերդի պարիսպների ավերակներ, որին տեղացիք Ալբերդ են անվանում ավանդաբար. հավանաբար սա հենց այն բերդն է, որը նույն անունով հիշատակված է Ասողիկի կողմից, Թէոփիլոս կայսեր արշավանքների առնչությամբ՝ IX դարի առաջին կեսում։ Բերդից հարավ կա մի հասարակ մատուռ՝ ս. Մամաս անունով։*

*Ներկա ժողովածուի մեջ այս գյուղից ներկայացվում են 83 արձանագրություն, որոնցից միայն 5-ն են հրատարակված եղել։*

### ԳՅՈՒՂԱՄԻՋԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

***898. ԽԱՉՔԱՐ**, մեծ, գեղաքանդակ, կանգնած է արևմտյան եզրին, պատ-վանդանի վրա. քիվին և խորանի վերին եզրերին 3 տող.*

. . . ՍՈԲԽԱՆՍԲ ԱՄԱՂԱՖԻՆ
ՈՐՆԱԴՈՂ




. . . ՍՈՒՐԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՍԱԴԱՔԻՆ|
ՈՐ ԿԱՐԴՈԴ| ԹՎ. :Ջ: (1451):

Ծանոթ. *Առաջին տողի սկզբի մասում քարը կոտրված է։ Երկրորդ տողը թաղնված է թերի։*